


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻՂՈՎՈՒՄ ՍԻՆՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԻՒՆ ԱՌՋԵՒ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 38

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ, 30 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՀԱՅ ԿԱՄՄԱՆՈՐՆԵՐ

Մեր Ֆրէզնոյի թղթակիրը՝ Տ. Նը- շիկեան կը գրէ յուլիս 20 թուով. Հայերէն հետեւեալ անձինք կը գտնուին զինուորական ծառայութեան մէջ:

Տիար Ն. Սուճեան Մարցունացի, որն որ այժմ կը գտնուի Ֆիլիպեան կղզիները գնացող բանակին մէջ:

Տիար Ա. Փիթըրս և իւր որդին Վ. Փիթըրս (Կարնեցի), և 2. Պատիկ- եան (Վանեցի):

Ասոնցմէ զատ կը գտնուին մի քանիներ ալ, որք լրացուցած են ի- րենց շրջանն, բայց գործօն խում- բերուն մէջ չեն գտնուիր:

Պ. Տիգրան Պաղտասարեան որ թնայանքով զորաց երրորդ բա- նակին հետ կամաւոր գնացած է Պոս- թոնէն, քարտով մը կ'իմացնէ իւր Պոսթոնի մէջ իր զաւակներն թէ իրենց գունդ այժմ Ֆորթ Բազուէլ (Նորթ- Բարուայն) հասած՝ հոն վարժու- թիւններ ու մարզանքներ կ'ընէ՝ ըս- պասելով մեկնելու հրամանին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սպանիան դեռ համոզուած չէ թէ յաղթուած է: Այս իւր ամօթա- լի պարտութենէն վերջ դեռ Մատ- րիտի քաղաքագետները զուրխին չեն ծոբեր, և այս պինդ լուրերէն միակ պատճառն է թագաւորական գերդաստանի անապահով դրութիւնն Տօն Բարրոս, որ այս շարժում ան- պարանօք շեղուեալ գնացած է, յայտարարեց թէ սպանիական կառ- վարութիւնը եթէ «անպատիւ» խա- ղարութիւն ու հաշտութիւն մը կըն- քէ: Ինք իր կուսակիցներուն հրաման պիտի տայ որ ապստամբին: Այս պա- րագաներու տակ անհնարին կը թուի հասկիլ թէ ինչպէ՞ս պատուաւոր հաշտութիւն կրնայ ըլլալ. ամեն մէկ օր և ամեն մէկ ժամ որ կ'անցնի, նոր կորուստ մ'է Սպանիոյ համար: Եւրոպական միջամտութենէ յոյս չի կայ. իսկ տէրութեան դանձը այն աս- տիճանի պարագայ է որ ո'չ միայն զին- ուորացի՝ այլ և պաշտօնէից ամա- թոռակներու վճարումն անգամ դադ- րած է. եւ անօթի փորով մարդ չի կրնար կուրիլ: Այս ճշմարտութիւնն կրկին անգամ ապացուցուեցաւ Սան- թիակոյի բանակին մէջ: Սակայն ի՞նչ օգուտ: Չի լսել ուղղուն աւելի խուլ կարեւրի է գտնել:

Այս սողեր հրապարակ եկած ա- տեն թերևս Չոր. Մայրըսի բանակը փորթօ Բիքօ հասած ու ցամաք ելած ըլլայ. և թերևս մի քանի օրէն ալ Մով. Վաթսըն Սպանիոյ հասնի. ի՞նչ պիտի ընեն Տօնեան այն ատեն: Բայց անոնք դեռ կ'երազեն Բիւպան ան- դամ ազատել. բան մը որ իրենց ե- րազին մէջ միայն հնար է: Չոր. Պը- լանքօ որչափ ալ քաջութիւն ցուց- նէ, օր մը չէ օր մը իր ընկերոջ թօ- բալի բազմին պիտի արժանանայ: Կ'երևի թէ անխել կերպով դիմադ- րելն ու շարաշար պարտութեան վեր-

ջի մրուրը քամելէ վերջ տեղի տալը «պատուաւոր հաշտութիւն» կը նշա- նակէ քաղաքական աշխարհի մէջ:

Ֆիլիպեան կղզիներու գրաւումը հեռի չէ: Գերմանիան չի պիտի հա- մարձակի վերջապէս միջամտել այս գործոյն մէջ, և եթէ միջամտէ, հա- ւանական է որ Մով. Տուլի Ատմի- րալ Տիտրիսի նաւատորմին ալ Մօնթէնոյի գրահանուերուն քով զը- կէ: Արդեօք Գերմանիա ծովի վրայ ամենազօրաւոր ազգը չեղած ըլլա- լով՝ կը փափաքի ծովին տակ մեծա- գոյն նաւատորմի ունենալ: Այդ փառքը մինչև հիմայ Սպանիոյ յատ- կացում էր. եւ ի հարկէ չի պիտի զարմանանք եթէ Վիլհելմ կայսրը այդ պատերիս ալ նախանձի, զի ա- նոր ճակատագիրն է «ամեն թելէ զարնել»:

Այս պատերազմի վերջաւորու- թիւնը ընդհանուր մի օրհնութիւն ու բարեք պիտի կրնայ ըլլալ բոլոր աշխարհի եթէ՛ Բիւպան ազատ ըլլայ, Փորթօ Բիքօ Ամերիկայի մնայ. Ֆի- լիպեան կղզիները Գերմանիա առնէ. ու անոնցմէ մին Գաղղիոյ տայ իւր ամուրի կայարան. Ալգաւ Լորէնը Գաղղիոյ նա տրուի, պայմանաւ որ Գաղղիա ալ Սպանիոյ պարտքն ա- պահովցնէ ու մասամբ իր վրայ առ- նէ: Այսպիսի լուծում մը մարդա- սիրութեան ու քաղաքակրթութեան տեսակէտէ նայելով՝ անգործ քայլ մ'է դէպի յառաջդիմութիւն: Ասով երեսուն տարիէ ի վեր Գերմանիոյ և Գաղղիոյ մէջ եղած թշնամութիւնն, որ մեծ շարիքներու պատճառ եղած է, կը վերնայ, և այս երկու տէրու- թիւնք կը միանան Ամերիկայի և Անգ- ղիոյ հետ ընդգէմ և մուսոյն՝ որ աշ- խարհիս ընդհանուր թշնամին է, և զայն կը բանտն երկաթեայ ամուր վանդակի մը մէջ, ուսկէ չի կարո- յանար դուրս գալ ասկէ վերջ: Եւ բայց աստի պառաւ ու գազան թրքի չարքիւններն ալ ուսը տալով՝ զայն Պոսթօրի գեղեցիկ եղբերներէն ու Փոքր Ասիայէն ԵՏՄՏՅ կը զրկեն. եւ այն ատեն աշխարհ, ինչպէս նաեւ Հայ ազգը, կրնայ ազատ ու հանգիստ շունչ առնել:

Տաճիկ կառավարութեան կողմէ պատերազմը դիտելու պաշտօնով, Բուպա զրկուող զինուորական կցորդ Եսվէր փաշան Սանթիակոյէն վերա- դարձաւ այս շարժում: Ուրիշ լրագ- րի մէջ իւր հրատարակած մի ըն- դարձակ յօդուածով՝ Եսվէր փաշա տեղ տեղ կ'ընթանչանայ ամերիկացի զինուորացի վրայ. և այդ սքանչա- ցման պահուն կը մտաբերէ տաճիկ զինուորին դիւցազնութիւնն թուրքօ շէլլէն կուրին մէջ: Բայց Եսվէր փաշա կը լսենք թէ՛ հակառակ իր հը- րատարակած յօդուածին՝ բարեկա- մական շրջանակի մէջ խիստ կերպով քննադատած է ամերիկացիներն եւ ըսած է թէ՛ այս ո'չ թէ պատերազմ մըն է, այլ պարագայն «էշխիայու-

թիւն» մը ամերիկացուց կողմէ: Ի- հարկէ Տաճիկ պաշտօնէի այս երկ- ե- րես խօսքերն կարևորութիւն չունին ամերիկացուց քով. եթէ նա իր կար- ծիքը անկեղծութեամբ հրատարա- կած ըլլար, ժողովրդի վրայ պիտի թողուր ճիշդ այն ազդեցութիւնը, ինչ որ թողուց իր Ուրիշի մէջ հը- րատարակած ընդարձակ յօդուածն, վասն զի ամերիկացին հասած է այն հաստատ համոզման թէ թրքի մը բերնէն ու զրչէն բղխած խօսք մը կասկածելի է միշտ ու չունի նշա- նակութիւն:

Կ'ըսեն թէ թուրքերը ուր որ եր- թան կ'օղիկուն տակ տաճիկական հող կը դնեն, որպէս զի ինքզինքին Տաճիկաստան կարծեն ու թերևս իբր Տաճիկ խորհիւն և խօսելէ չի շեղին պատահմամբ: Կը թուի թէ Եսվէր փաշան ալ նոյնն ըրած է իւր այս ճամբորդութեան մէջ, ինչպէս որ ը- րաւ Սուլթան Աբդըլ ֆարիզ զնա- ցած ժամանակ: Սակայն թուրք զին- ուորական կցորդը դիտնալու էր թէ ափ մը հողը Ամերիկան Տաճիկաստ- անի մը չէր փոխեր, թէ և Տաճիկն գու- ցէ Տաճիկ կը պահէր՝ բառին բովան- դակ նշանակութեամբ: Հոս ժողո- վուրդը լաւ սերտեց թուրքը, մանա- ւանդ վերջի կոտորածներէն պար- ին:

Բիւպայէ ցաւալի լուր մը եկաւ այս շարժում, իբր թէ Չոր. Կարսի, բնիկ քիւպացի, իր զօրքերով մէկ- տեղ բաժնուած Չոր. Շաֆթըրի բա- նակէն՝ լեռը քաշուած է: Կ'ըսուի թէ Կարսիս նամակ մ'ալ գրած է ամերիկացի հրամանատարին, որով կը գանգատի եղբր թէ Շաֆթըր կա- րևորութիւն տուած չէ եղբր Բիւպա- ցի զօրավարին և Բիւպացուց ինչ ինչ խնդիրներու մէջ: Այս լուր թէ և պաշտօնապէս հաստատուած չէ տա- կալին, բայց մեծ շփոթութիւն յա- ռաւ բերաւ տեղական մամլոյ մէջ: Եթէ իրօք Բիւպացիք թեթևամտու- թեամբ իրենց համար, ու իրենց ա- զատութեան համար կոռուող ազնիւ ազգի մը գէմ հակառակիլ փորձեն, ապերախտութեան անգամ հարկէն կ'արտանային հասած կ'ըլլան, և ի հարկէ այդպիսի ապերախտութիւն մը անպատիժ չի մնար. բայց կը յուսանք որ Բիւպա- ցիք Միացեալ Նահանգաց գէմ ըմ- բոստանալու չափ տխմար չեն գըտ- նուիր:

Մեծ յեղափոխութիւն կայ Չի- նաստանի մէջ: Այս յեղափոխակա- նայ նպատակն է ներկայ կառավա- րական ընտանիքը տապալելով՝ անոր տեղ հանրապետութիւն մը հաստա- տել: Մի քանի քաղաքներու մէջ ար- իւնայեղութիւններ տեղի ունեցած են, և աւելի կարևոր լուրերու կ'ըս- պասուի ամեն օր:

Չինաստանցիք, հովանոցով պա- տերազմի երթալու չափ այդ տգէտ Մոնկոլներն անգամ հանրապետու- թիւն կ'ուզեն, բայց մենք, կամ մե- նէ շատեր դեռ գոհ են մնալ սոսկա- լի լուծի մը տակ, ուր շարք ու կը- տոր ըլլալէ վերջ իսկ՝ դեռ կոտոր մը

չոր հացէ զատ ուրիշ ոչինչ կը ջանան ձեռք ձգել հոն՝ չի մեռնելու համար:

Հօնտօնէն եկած հեռագիր մը Պիզմարք իշխանն մահուան անկող- նոյ մէջ կը գնէ դարձեալ, բայց այս քանի՞երրորդ անգամ է որ երկաթ- եայ անգուլ նախարարապետն մահ- ուան դուռ կերթայ անգուլ լրա- տուներու ձեռք: Եթէ այս անգամ Պիզմարքի մահը իրականութիւն դառնայ, մեծ անգղիացույ մահուանէ քանի մը շարաթներ վերջ, նոր մար- զարէներու գուշակութիւններն մա- սամբ իրականացած պիտի ըլլան. եւ Անգղիոյ թագուհին թերևս ալ սկսի դողալ իր կեանքի վրայ, զի նոր մարգարէք տարեգլխուն կ'ըսէին թէ 98 թուականի հետ անցելոյն պիտի միանան երեք անձնաւորութիւնք. Կլաւտսթոն, Պիզմարք և Վիլքոքորիս:

Խաղաղութեան լուրերը Փարի- ղէն կը հասնին: Տեղոյն սպանիական դեսպանն Լէօն Ի Գասթիլօ հրահանգ ընդունած է եղբր Մատրիսէն՝ բա- նակցիլ Փարիզի ամերիկական դեսպա- նին Չոր. Հարիս Փորթըրի հետ՝ պա- տերազմը վերջացնելու համար: Ու- րիշ հեռագիրներ կ'ըսեն թէ Մատրի- տի մէջ խնդրագիր մը պատրաստ- ուած է Ուաշինկթընի կառավարու- թեան ուղղեալ, որով Սպանիա զի- նադադար մը կը խնդրէ Ամերիկայէ՝ խաղաղութեան բանակցութիւններն սկսելու համար:

Փարիզէն եկող վերջի հեռագիր- ներ աւելի կը ճշգրեն այս խնդրի՝ ի- մացնելով թէ, Սպանիոյ խնդրաւորք, Ուաշինկթընի գաղղիական դեսպան Մ. Գամպոն, Սակասթայի նախարա- րութեան զինադադար խնդրող պաշ- տօնագիրը ներկայացուցած է անցեալ օր Նախագահ Մագ Գինլիի, արտա- քին գործոց նախարարապետի ներկա- յութեամբ: Կ'ըսուի թէ Նախագա- հը՝ սպանիական քաղաքակրթութեան խարէութեանց գոհ չ'երթալու հա- մար՝ պիտի մերժէ ընդունիլ այս խոնարհ առաջարկ, եթէ Սպանիա յանձն չառնէ կանխաւ ընդունիլ Ա- մերիկայի այն գլխաւոր պայմանե- րը, որք կարելի չի պիտի ըլլայ ո՛ր և է փոփոխութեան ենթակից բանակ- ցութեանց ժամանակ:

Նախագահին այս կտորուկ ընթաց- քը ի հարկէ պիտի ստիպէ Մատրիտի կառավարութիւնն զուրխ ծռել ամեն արդարացի պահանջներու: Եւ եթէ սա չի փութայ անմիջապէս տեղի տալ, անդին Փորթօ Բիքոյի մայրաքաղա- քը, որոյ մօտ են այժմ Մայրըս ու ա- մերիկեան գրահանաւք, տակն ի վը- րայ կը դառնայ:

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Անցեալ Կիրակի երեկոյ Տիար Յա- կոբ Թաղաքեան ամուսնացաւ այրի Տիկին Խանում Պողոսեանի հետ: Պա- կի արարողութիւնը կատարեց Արժ- Տ. Խաղ վարդապետ:



ՇԱՐԿԱԿԱՆ ԱՋՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Կը հրատարակուի մինչև Շաբաթ օրեր,  
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:  
Թ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, . . . . . ԳԱՆՁԱՊԵՏ.

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ  
ՔԱՆԱՏԱՑԻ ՀԱՄԱՐ  
ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 Ֆրանք.  
Տարեկան 1 50  
Վեցամսեայ 75  
Շուրջամսեայ 40

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝  
T 3 113 DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՅԻ ԵՈՐԲ, ՇԱՐԿԱ, ՅՈՒՆԻՍ 30 1898.

ՎԵՐՋԻ ԶՂՁՈՒՄՆ ԱՆՕԳՈՒՏ Է

Շատ մը ազգեր կամ ժողովուրդներ՝ երբ պատահաբար կիրնան իրենցմէ աւելի զարգացեալ և յառաջագնաց երկր մը, կը ջանան տեղւոյն կամ միջավայրին ընծայած առիթներէն օգտուիլ, և ինքզինքնին ալ զարգացման և յառաջադիմութեան շաւղին մէջ դնել:

Այսպէս եղած է շատ հին ժամանակաց մէջ ալ. օրինակի համար՝ Հրէից ազգը երբ ի Բաբելոն կամ յԵգիպտոս գերի վարեցաւ, ո՛չ միայն իր ազգութիւնն ու կրօնքը անաղարտ պահեց, այլ և տեսնելով թէ՛ այդ երկիրներու ժողովուրդը իրմէ աւելի յառաջ անցած է ուսմանց, գիտութեանց և մանաւանդ արհեստից մէջ, ինքզինքը տգէտ և ստրուկ ձևացնելով՝ մտած անոնց ամեն իստեւորուն մէջ և ամենայն ճարտարութեամբ իւրացուց այն երկրի բոլոր գիտութիւններն ու արհեստները: Այդ օրէնց այսօր թէ՛ և հազարաւոր տարիներ անցած են, ու դարերու հորովմը շատ մը ազգաց ու ժողովրդաց յատկութիւններու և սովորութեանց վրայ մեծ փոփոխութիւններ յառաջ բերած է, սակայն Հրէից ազգը իր նախնիին ճարտարութիւնը և այլոց հարատուութիւնն ու արուեստը գողանալու հնարամտութիւնը երբէք փոխած չէ և չ'պիտի փոխէ:

Կար ժամանակ մը, որ ատեն Հայք ալ՝ Հրեայներէն ո՛չ նուազ ճարտարութեամբ՝ կը դիմէին ի Բաբելոն, յԵգիպտոս և յԱղեքսանդրիայ, ու այդ նշանաւոր կերտումներու մէջ օտարներու գիտական, փիլիսոփայական և երբեմն ալ արուեստից վերաբերեալ ճիշդերն ուսանելով կը դառնային Հայաստան՝ իրենց մայրենի աշխարհն ըստաւորելու անդուստի տեսնելով. և այսօր Հայ ազգը իր գիտական և փիլիսոփայական հնութիւններն այդ անխոնջ մշակաց աշխատութեան կը պարտի: Սակայն ի՞նչ է Հայ ազգի ներկայ վիճակը. արդեօք քանի՞ հոգի կարելի է գտնել իւր նախնեաց այդ գովելի ընթացքին հետևող:

Մեծ մարդասպանը՝ իրաւ է թէ նմանը չ'տեսնուած հարուած տուաւ Հայ ազգի գոյութեան, և գրեթէ մահաձեռք վիճակի մը մատենեց գայն, սակայն միւս կողմանէ ալ անուրանալի է անոր Հայ ազգին ակամայ մատուցած մեծ ծառայութիւնը: Հայ ազգը իր կենաց բոլոր օրերուն մէջ չարաչար կը գանգատէր Մուսթաֆի ի գործ դրած ճշմանը դէմ. Հայաստանի մէջ ազատութիւն չկար՝ յառաջդիմութեան և զարգացման միջոցներու վրայ խորհելու կամ խօսելու: Եւ ահա այդ բռնաւորը ինքն ստիպեց զՀայն, որ երթայ աւելի ազատ և զարգացեալ երկիրներ և հոն աշխատի իր իղձը պահելով. — յառաջագնացի մը:

Եւ ահա այսօր Հայ ազգի մի ստուար մասը՝ աւելի քան 15000 հոգի կը գտնուին աշխարհի ամենէն զարգացեալ և ազատ կարծուած երկրին — Ամերիկայի մէջ, և սակայն այդ ահագին գաղթականութեան մէջ քանի՞ հոգի կարելի պիտի ըլլայ գտնել, որք տրամադրութիւն ունենան իրենց և իրենց ազգի ապագայ կենաց մասին խորհելու, խօսելու, գործելու և ի հարկին նաև գոհնելու:

Ազնիւ ընթերցող, թերևս զիս ալ «յոռետես» անուամբ մկրտես, սակայն վստահ եղի՛ր թէ մէկ Լսարան, երկու Գրադարան, հինգ Որբախնամ և կէս Բարեխիտաց ունենալով՝ ժողովուրդ մը զարգացման և յառաջդիմութեան շաւղին մէջ գտնուած չ'ըլլար, այլ ժողովրդեան մը վարկն ու պատիւը այն ատեն միայն կը բարձրանայ, երբ իր մէջ կը գոյանայ զօրաւոր ընկերութիւններ և կազմակերպութիւններ: Եւ հիմայ ո՛չ թէ ճիշդ ժամանակն է, այլ և շատ ո՛ւշ է արդէն, որ Ամերիկայի Հայ երիտասարդութիւնը սթափի իր թմրութենէն և սկսի գործել. գործել անկեղծութեամբ ու անձնուիրաբար, ո՛չ թէ այն խաչագողներու նման, որք այսօր Ամերիկայի մէջ ազգին անու-

նով օտարներէն կը մուրան՝ իրենց որովայնը պարարելու համար. և սակայն ցաւալի է խոստովանիլ, թէ մեր ժողովուրդը դեռ չէ կարող որոշել ճշմարիտ գործողը՝ խաչագողէն: Ուստի ազնիւ ընթերցող, դու որ Հայ ազգի մի անդամն ես, և կը պարծիս Հայկայ, Արամայ, Վարդանայ և Վահանայ անունով, այս վայրկենէն իսկ ուխտէ ինձ հետ յանուն քո պաշտելի նախնեաց, ի սէր քո արիւննաների Հայրենեաց՝ մէկդի ձգել ամեն անտարբերութիւն, և աշխատիլ յօգուտ սիրեցեալ ազգիդ և ի փառս որդեկոյս մայր Հայրենեացը: Կ'անցնին օրերդ, կը սահին ժամերդ, և երբ կեանքդ կը հասնի իր վերջակէտին, ահա այն ատեն է որ պիտի զղջաս անխառնակ մեկնելուդ վրայ. բայց «վերջին զղջումն անօգուտ է»:

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Ազգ մը կայ, որ կաշառք առնելու վատ ուստոր սովորութիւնը ունի — Թուրքը:

Ազգ մըն ալ կայ, որ կաշառք տալու ցած և պախարակելի սովորութիւնը ունի — Հայը: Եթէ օրէնքին առջև կաշառք տուող և առնող անհատները հաւասարապէս յանցաւոր են, շատ պարզ է որ հաւասարապէս յանցաւոր են կաշառուող և կաշառատու ազգերն ալ: Կրօնափոխ Ալի Շահապէ Էֆէնտին շատ անգամ ըսած է թէ՛ Հայերն էին, որ Թուրքերը կաշառակերութեան մոլութեան վարժեցուցին. . . . . ամեն անչառ պարագաներու մէջ կաշառք առաջարկելով Թուրքին: Ազգուրաց պետական այս մեծ մարդու կարծիքն այնքան ճշմարտութիւն կրնար չ'ըլլալ, եթէ մեր հին պատմութեան էջերուն մէջ մէկէ աւելի անգամներ չը տեսնէինք մեր նախահայրերու ալ կաշառատուութեան մոլութեան սիրահարութիւնը: Սուրբով, նիզակներով և նետերով մեր վրայ խուժող արիւնարբու թշնամիին դիմաւորելու ելած ենք, շատ անգամներ. . . . . թանկագին նուէրներով, ափ ափ ոսկիներով. . . . . սլաքի հարուածներով՝ ոսկիի գնտանկերով պատասխանած ենք. . . . .

Մեր այս հին և ստոր սովորութիւնը հետեւին բերած ենք այս երկրի մէջ, և այսօր նաև ինկլիշտի մէկ ծայրէն միւսը Հայ գործաւորները ճանչցուած են իրր կաշառատուներ:

Երբ կոտորակ-վիրուկ անգլիներէնով չընչին գործ մը ուղեցինք պոսէ մը, անմիջապէս վերջն ալ կղկղալէն հասցուցինք անոր թէ պատրաստ ենք իրեն «նուէր» մը տալու: Արդիւնքն այս եղաւ որ, աղնիւ նկարագրի տէր պօսը արդար զգուանքով մը դուրս հանեց մեզ իւր գործարանէն, իսպառ փակելով մեր առջև այդ գործարանի դռները. իսկ անազնիւ ստորին պօսեր ալ եղան, որոնք շահագործեցին անխելու հայը ու առին մեզմէ թանկագին տաճկական գորգերը, սուղնոց ձեռագործները և շատ անգամ ալ շատ մը տողարներ, ու մեզ տուին ապրելու չափ գործ մը: Հազիւ թէ մեր օրական հացէն կտրելով՝ քանի մը թուղթ աւելցուցած էինք, կաշառակեր պօսը «օճառ դրաւ մեր ոտքին տակ» որովհետեւ դուրսը ուրիշ Հայեր ալ կ'սպասէին միևնոյն պայմաններով գործ մը ձեռք ձգելու համար:

«Եթէ Հարունակական գործ չը պիտի տա՛յիր, խալիս տուր. դրամս տուր» ըսինք պօսին. կռիւր կ'սկսի, որն շատ անգամ մինչև գործատէրներու քով կը վերջանայ և կամ դատարանները կը հասնի: Եւ այսպէսով ալ կաշառակեր պօսն ալ սկսած է չը սիրել զմեզ և գործ չը տալ, որովհետեւ վերջէն նեղութիւն կը պատճառենք իրեն, նոյն իսկ իր գործը կորսնցնելու պատճառ կ'ըլլանք:

Թաճախ ալ կը պատահի որ ցածհոգի պօս մը չէ որ պիտի կաշառենք՝ դժոխային գործ մը ունենալու համար, այլ. . . . . մեր սենեկակից Հայ եղբորը տալու ենք նուէր մը, որ մեզ համար իւր գործարանին մէջ գործ մը առնէ: Եւ հաստատապէս գիտեմ, մեր Հայրենակիցները աւելի շատ կը պահանջեն քան պօսերը. այս պարագային մէջ կաշառք առնողը Թուրքին դերը կը կատարէ, իսկ տուողն ալ արդէն Հայու սովորական դերը:

Տեղական Հայ Մամուլին, և միայն տե-

ղական Հայ Մամուլին պարտականութիւնն է, որ զօրաւոր փաստերով համոզէ Հայ գործաւորները՝ որ միանգամ ընդ միշտ կաշառք տալու մոլութենէն վազ գան: Այնչափ կենսական գործեր ձգեցինք տեղական Հայ կղերականութեան վրայ, որ նա թերացաւ իւր պարտքին մէջ՝ դէպի Հայ գործաւորները. ու զբաղեցաւ իւր անհատները վէճերով: Անոր ձգելու չէ այս խնդրն ալ. Մամուլը հիմակ շատ աւելի զօրաւոր և անկեղծ կերպով կը խօսի տեղական Հայ գործաւորներուն, քան վեղարաւոր և սիրենախրով «բարոզիչները»:

ՍՈՍԿԱԼԻ ԵՂՆՈՒ ՄԸ

Իրաւունք կը գրէ. Ամերիկացի մարդասէրներու նպաստով Իգմիրի մէջ հաստատուած որբանոցի մը անօրէնքը, Տքթ. Ֆէրքէն, քանի մը Հայ որբուհիներու վրայ անբարոյական արարքներու մէջ գլուխուած է:

Տեղւոյն ազգ. վարչութիւնը եղելով իւր իմանալով, կառավարութեան կը դիմէ: Ամերիկեան Հիւսպատոսին և ամերիկեան միսիօնարներու կողմէ կարգուած քանի մը բժշկներ նախնական քննութիւն մը կը կատարեն նախ, մէկ քանի որբուհիներու վրայ, որ ազգային հիւանդանոցը փոխադրուած են և սպա նոյն իսկ որբանոցին մէջ: Բժշկներուն տեղեկագիրը ոճիբը կը հաստատէ: Կառավարութիւնն ինչիբը ձեռք առած է և յանցաւորը դատի ենթարկած:

«Բիւզանդիոն» կը գրէ այս մասին.

«Իգմիրէ առնուած լուրեր հետզհետէ կը հաստատեն Որբանոցի մը անօրէնքը Ֆէրքէն անուն անձի մը անբարոյական ընթացքը, մի քանի մանչ և աղջիկ Հայ որբերու նկատմամբ: Ֆէրքէնի համար թէ և ըսուեցաւ, որ ամերիկեան Հպատակ եպիսկոպոս մ'է, սակայն յետոյ հաստատուեցաւ թէ Հոլանտացի կաթոլիկ է, ամերիկեան Հպատակ ու եպիսկոպոս չէ, և ամերիկայի Միսիօնարաց Ընկերութեան հետ բնաւ վերաբերութիւն չունի: Ուրիշ լուրի մը նայելով, Ֆէրքէն, որ ընկի Իգմիրցի է և օտարակազմապետ, քան ասորի-առաջ մոլեռանդ կաթոլիկ է եղեր, բայց մէկ քանի տարի առաջ Մ. Նահանգներն երթալով, բողոքականութիւնն ընդունելու և եպիսկոպոսի տարազով Իգմիր վերադարձր է. հոն իր յոռի ընթացքը ծանօթ ըլլալով, բողոքական ընտանիքները երես չեն տուեր և իրենց տունները չեն ընդունել: Ֆէրքէն մէկ քանի տարի այսպէս երեսն ինկած մնալէ յետոյ, անցեալ տարի Ամերիկայէ ստացած շատ մը նպատանքով որբանոց մը բանալով, 30ի չափ մանչ ու աղջիկ տղաքներ հաւաքել է. բայց վերջերս յանձնաժողովոյ մը քննութեան հետևանք, որուն բժիշկներ ալ մասնակցած էին, Ֆէրքէնի ինչ ինչ յոռի արարքներն երևան եկեր են: Մէկ քանի տղաքներ, որոց ամենէ մեծը 12 տարեկան, ցաւալի խոստովանութիւնները ըրեր են Տքթ. Կոստան և ձէլպեան էֆ. ներսը»:

«Արևելեան Մամուլ» հետեւեալ կերպով կը վերջացնէ այս ամօթալի գաղթականութեան մասին գրած մէկ յօդուածը. — «Տեղ տեղ Հայ թշուառ որբը յոռիափոխ ընելու համար իգործ դրուած փորձերը լսած էի արհամարհանքով, լսած էի թէ ինչպէ՞ս կրօնամոլներ, աստուածապաշտութեան դիմակով՝ անմեղ և պարզ հոգիներ իրենց մայրենի լեզուէն ու եկեղեցիէն անջատելու ձգած են, և դեռ կը ճգնին. սակայն չէի կարող երևակայել որ մոլեկան կերպից զոհ ալ պիտի ըլլային անմեղ գառնուկներ կրօնադէմ գալելու կողմէ. . . . »:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԻՍԻ

Պօսքն, Յուլիս 25. Երէկ երեկոյ քաղաքիս ու շրջակայից հայերը ամերիկեան «Կամալորաց նպաստամատոյց Ընկերութեան» օգնելու նպատակաւ ժողով մի ունեցան Օլտ Գոլօնի մատարան մէջ: Նախագահ Պ. Գալմէքեանն ըստ ժողովը՝ յայտնելով նպատակին կարևորութիւնն և օգտակարութիւնն Հայոցս համար: Օր. Ալիս Սթոն Պաքուէլը բացատրեց Սպանիոյ գաղանական կեղեցուցները, որոնք Թրքաց վայրագութեանը նմանեցուց, և իր խօսքը փակեց

ըսելով թէ՛ Մով. Վաթարն Սպանիոյ Հետ գործը կարգադրելէն ետք պիտի յառաջանայ դէպի թուրքերա՛ Սուլթանի հետ իրենց հաշիւը մաքրելու։ (բուն ծափահարութիւնք)։ Պատ. Միքայէլ Յովհաննէսեան հակիրճ ու ազդու բանախօսութեամբ մը ցոյց տուաւ թէ՛ ինչպէս «Սուլթանը» ի ճակատամարտը փոխեց Եւրոպայի քաղաքականութիւնը, նոյնպէս Սպանո-Ամերիկեան պատերազմը ցոյց պիտի տայ ամբողջ աշխարհի, թէ՛ միապետական անողոք իշխանութիւնք ընդ հուպ պիտի ապալին և տեղի տան հասարակապետական կառավարութեանց, որոյ մէջ ժողովրդեան պիտի տրուի կենաց, պատուի և ընչից ապահովութիւն, ինչպէս նաև մամուլ, խօսքի և գրչի ազատութիւն, և այդ առանձնաշնորհումները պիտի կազմեն ժողովրդեան բարոյական, մտաւորական և ֆիզիքական կորովը. ինչպէս որ այժմ կը տեսնուի այս երկրի մէջ։

Օրինորդ Գինկոթըն խօսեցաւ «Պէյ Սթէյթ» անուն նաւուն վրայ, որ պիտի զրկուի այս նահանգի մէջ հաւաքուած նպաստներովը ի Սանթիակո։ Գանձուած և գանձուելիք դժբախտներով պիտի գնուին պտուղ, դեղ, վերականգն և հիւանդապահներ պիտի հայթայթուին։ Օր. Գինկոթըն անձամբ պիտի երթայ և օգնէ։

Տ. Կ. Յ. Փափազեանը ներկայ եղող 200ի չափ Հայոց քսակներուն կողմէն ըրաւ մասնակցիլ հանգանակութեան, որ քսակեցաւ իր խօսքերէն վերջը. արդիւնքը եղաւ 26 տոլար և 50 սէնթ։ Ոմանք պիտի աշխատին ներկայ չ'եղողներէն ալ նըպաստներ գանձել և վերայիշեալ գումարին հետ յանձնել ընկերութեան գանձապետ Մր. Հ. Լ. Հիկինսընի։ Հանգանակութիւնն կատարուելէն յետոյ ժողովը փակուեցաւ։

ԱՌԵՆԱՅԻ

Մ Ա Ն Ր Ա Լ ՈՒ Ր Բ

Հէվրիի որբախնամ խմբակը Արժ. Տ. Վաղինակ վարդապետի միջոցաւ 10 տոլար կիպրոսի և 10 տոլար Եւրոպայի որբանոցներու հոգաբարձութեանց զրկեց։

Պ. Հայկ Ապազ ընդարձակ նամակաւ մը կը հերքէ Ուլուցի Պ. Մ. Մարգարեանի մի պատասխանն՝ որ հրատարակուած էր մեր 33րդ թուով։ Պ. յօդուածագիրն իր առջի գործածներն երկրորդելէ զատ՝ կը թուէ շատ մը ազգայիններու անուններ, որք Մարգարեանի դէմ դատուենքեր են՝ այլ և այլ խնդիրներու համար, և ասոնց վկայ կը կոչէ տեղական թերթերը, որք լի են եղած երբեմն յիշեալի գործերով։ «Շնորհիւ իրեն ո՛չ մի կազմակերպութիւն կանգուն մնաց. նախկին հովիւ Արժ. Ուազ վարդապետ, Պատ. Յովհաննէսեան և ուրիշ ակնաւոր անձինք, կ'ըսէ նամակագիրը, բազմիցս Չըլսի եկան՝ Մարգարեանի խնդիրներն կարգադրելու և անոնց վերջ տալու համար. բայց իզուր...»։ Անցեալները նիւ երթոքէն Տիգրանակերտցի Յակոբ անուն երիտասարդ մը հոս գործ չի կրնար գտնելով, Մարգարեանի ճաշարանին մէջ ծառայութեան կը մըտնէ՝ շարաթական 1½ տոլարի։ Բանի մը շարաթակ վերջ Յակոբ ձանձորացած կը թողու գործը. Մարգարեան շարաթականներն վար կը դնէ՝ առարկելով թէ Յակոբ պնակներ կոտորած էր. ասոր վրայ կուր մը կը ծագի ու մարգարեան խեղճ տղուն վրայ այս յարձակելով անոր զլուխը կը պայտուէ ու արեան մէջ կը լուսայ գայն։ Ոնջիրն դատարան գնաց, բայց Յակոբ դրամ ու լեզու չունենալով չի կրցաւ իր դատ պաշտպանել։

—Տիկին Աննա Գոնտագճեան անուն 70 ամեայ կին մը անցեալ շաբթու, ինքզինքն Պոյաճեան անուն ընտանիքի մը տան երրորդ յարկի պատուհանէն վար նետեց՝ ի Ուէսթ Հօպօքըն։ Տիկին Պոյաճեան և ուրիշ օգնութեան հասնող կիներ թէ և աշխատած են արգելել զինքը, բայց չեն կրցած յաջողիլ։ Տիկին Գոնտագճեան, որոյ կողմ ոսկորները կտորած են, հիւանդանոց փոխադրուած է. կ'ըսուի թէ իւր այս ընթացք մտաւորական հիւանդութեան արդիւնք է։

—Լիւնէն կը գրեն Յուլիս 18 թըւով. «Անցեալ կիրակի երեկոյ որբախնամ ընկերութեան մէջ ժողովը տեղի ունեցաւ՝ առաջնորդութեամբ Պատ. Ատալեանի, որոյ չորս գաւազները երգեցին անգլիերէն երգեր։ Ոստեցան այս առթիւ Տ. Յակոբեան, Տ. Մանուկ Մանուկեան՝ Եփրատ գոլէճի աշակերտ և ուրիշներ։ Այս ժողովոյ մէջ գոհացուցիչ հանգանակութիւն մը եղաւ ու քանի մը անդամներ աւելցան։

—Մանչէսթըրէն կը գրեն Յուլիս 21 թուով. «Անցեալ ուրբաթ գիշեր քանի մը աւազակներ, Մեյքոն Պետրոսեան անուն անձին (Ոսթիցի) սենեակին պատուհանէն ներս մտնելով՝ ունեցած մէկ արկղը կը գողնան կը տանին, որուն մէջ քանի մը տոլար դրամ, ժամացոյց մը և մաս մ'ալ լաթեղէն կը գտնուի եղեր. միւս օր արկղը գտնուեցաւ քաղաքէն դուրս բերի մը վրայ, բայց մէջը մէկ երկու կտոր անարժէք լաթ թողած են եղեր։ Աւազակները չի գտնուեցան։

—Մեր Ուսթըրի թղթակիցը կը գրէ մեզ թէ Մարտիրոս Տաուլճեան կամ Ձարլուս անուն Մօրէնիկցի անձը անցեալ շաբթու Փրովիտէնսէն քանի մը հայեր առած իրեն հետ, Ուսթըր կուգայ թրքական ներկայացուցում մը (թըրքիչ շօ) տալու նպատակաւ։ Տաուլճեան քանի մը ամերիկացի պարող աղջիկներ ալ ձեռք ձգելով՝ իր որոշած խաղը կ'սկսի ներկայացնել մասնաւոր սրահի մը մէջ, և բաւական յաջողութիւն կը գտնայ։ Անցեալ Շաբաթ երեկոյ ներկայացման վերջնապէս մէկ ժամ առաջ, Տաուլճեան՝ մէկը դնելով իր տեղ, կ'անհետանայ քաղաքէն՝ առանց մէկ սէնթ վճարած ըլլալու իր հայ ու օտարազգի դերասաններուն։ Տեղական թերթերն մանրամասնաբար գործած են այս ամօթալի արարել վրայ։

—Ս. Փրկիչ եկեղեցւոյ յանձնախումբը յաջողած է Տ. Մաշթոց վարդապետի հետ համաձայնութեան մը գալ, որով Ն. Սթ. պիտի ստանայ ամսական 30 տոլար թոշակ, ու իւր պաշտօնն պիտի ըլլայ եկեղեցական պաշտամունք միայն կատարել՝ մինչև իր յաջորդին գալը։

—Սարգիս աղա Հիսարլեան, նախկին դպրապետ Հայ. եկեղեցւոյ ինիւ երթք, Պրուքլինի հիւանդանոցին մէջ իր մահկանացուն կնքեց։ Հանգուցեղոյն մարմինը թաղուեցաւ Տ. Ուազ վարդապետի ձեռամբ։

—Լա Պուրկոյնի նաւաբեկեաններէն Սողոմոն Ահարոնեան նիւ երթքէ մեկնած ատեն դրամատունէ մը չէք մը ստացած կ'ըլլայ բարեկամի մը միջնորդութեամբ, ու հաւանականաբար անոր կտորնն ալ հոս ձգած չ'ըլլար։ Հիմայ որ չէքն ու կտորն կորսուած են իրենց տիրոջ հետ, յիշեալին եղբայրը, աղքատ մէկը, կը փափաքի լսել իր եղբոր միջնորդէն կամ այս մասին ո'ւ է լուր ունեցող անձէ՝ այն քանամասն հասցէն, ուսկէ առնուած էր փոխանակազիր։ Այսմասին կրնայ գրուիլ խմբագրութեանս։

—Հայրենիք երթալու համար թըրոյն նիւ երթք եկող չորս հայ ճամբորդներէ մին, կը գրէ մեր թրոյն թղթակիցը, իւր հարիւր տոլարը Մարթոկա շոգեանակն մէջ գողցնել տուած է։

Ն Ո Ր Ա Վ Է Պ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐ

—Այն տեղ են բնակում. մատով նշան տուց տան գետնայարկ նկուղը, որ պողոտայի վանդակապատից աստիճաններով վայր էր իջնում մինչև նկուղը.

—Սխալում էք, Սուրէնեանը այդ տեղ չի բնակիլ։

—Ինչո՞ւ. Սուրէնեանը կոմս է, կամ վանախորհրդէն է, որ այստեղ չ'ընկալի։

—Ինչ և իցէ, Հայ է. միայն կը հաճի՞ք մեզ առաջնորդել։

—Մի շարաթից աւելի է ներս ու դուրս անող չ'կայ. նորանից առաջ ամեն օր Տիկինը կ'գնար իր հիւանդամուտնին այցելութեան, հիմայ երբեւի ուրիշ տեղ են.

—Կարելի է ուրիշ տեղ են փոխադրուել։

—Ո՛չ, այն ժամանակ բանալիները կ'այրին ինձ։ Ես էլ հետաքրքիր եմ, գուցէ հիւանդ են, ասելով, աստիճաններից ցած իջան, դուռը բացան և երեքն էլ ներս մտան։

Մայր ու պապիկներ, շարիշար, տախտակամածի վերայ թափթիած էին։

Սամոթը մօտեցաւ Տիկին Սուրէնեանին և քաղաքավարի կերպով հարցրեց.

—Տիկին, հիւանդ էք. ապա, անմիջապէս բազուկը բռնեց՝ զարկերակը քննելու, ուր յանկարծ բացագանչեց. «մեռած է»։

Նոյն փորձը արաւ երկրորդի, երրորդի և չորրորդի վերայ.

—Բոլորն էլ մեռած են, և պատասխանատու դուք էք, խօսքը ուղղեց դռնապանուհւոյն։ Սակայն առ այժմ գնանք լուր տանք ոստիկանութեան։

Փողոցից անցնող ոստիկանի մը յայտնեցին եղելութիւնը, որ իսկոյն դուռը կնքեց, դռնապանուհուն ձեռքակալեց ու տարաւ ոստիկանատուն։ Երկու ժամից, Սամոթը ոստիկանապետի, քննիչի և բժիշկի հետ կնիքը կտորեցին ու ներս մտան։ Բժիշկը իր մանրազննին քննութիւնից յետոյ յայտնեց՝ որ սովամահ են եղել։

Տանը գտնուած թղթերը հաւաքեցին. մի առ մի Սամոթը աչքի էր անցնում և պարունակութիւնը յայտնում քննիչին. վերջը գտան մի փոքրիկ տետրակ՝ զա նորանց օրատետրն էր, որի մէջ օրի օրի վերայ գրած էր Սուրէնեան ընտանիքի գըլլիսին պատահածները. առաջին մասը Սուրէնեանի ձեռագրին էր, որ իսկոյն ճանաչեց Սամոթը. այդ մասը պարունակում էր մանրամասն տեղեկութիւններ, դէպքեր, պատահարներ մինչև Սուրէնեանի հիւանդութիւնը։ Հիւանդութիւնից յետոյ Տիկին Սուրէնեանը շարունակել էր մինչև իր ուշաթափելը. իսկ նորանից յետոյ պատահածը երեւաց քննութիւնից։

Տետրակին ընթերցումը չ'վերջացած՝ Սամոթը երկխայի նման ըսկըսեց լալ։ «Մի՞թէ այսպէս պիտի վերջանար այն մարդու կեանքը, որ իր հանգստութիւնն ու հարստութիւնը զոհեց նորա փրկարար սուրբ գործին համար»։

Վերջը Տիկին Սուրէնեանի կտակը կարդաց, որ խնդրում էր. «Ընթերցող, աղաչում եմ, միջնորդեցէք կառավարութեան, մեր դիակներն ամփոփուին այն փոսին մէջ, ուր ձգեցաւ իմ ամուսնի դիակը. այս է իմ միակ ցանկութիւնս»։

Տիկին Սուրէնեանի խնդիրը թէ և ինքը՝ ոստիկանապետը յանձն առաւ կատարել, սակայն Սամոթ խնդրեց ոստիկանապետից, որ թաղման գործը

ծը իրան թողնեն։

Պաշտօնեաները իրանց պաշտօնը կատարած ըլլալով՝ հեռացան տոսկալի տեսարանի վայրից. իսկ Սամոթը դիմեց դէպի հարուստները, որ գոնէ թշուառների դիակները պատուով թաղել յաջողի։

Բարեբաղդարար այդ օրը տօն էր, բոլոր աղաները իրանց մի հարուստ ընկեր վաճառականի տնում խնջոյքի էին հրաւիրուած։ Սամոթը իրողութիւնը մանրամասն նկարագրելով՝ աւելացրեց. «Պարոններ, սորանից մի տարի առաջ նորա հայրը ձեզ պէս հարուստ էր, դուք ամենեղ լուծանաչում էք նորա անխաղախ, բարի և ազնիւ բնավորութիւն. գիտէք նաև թէ որքան բարիքներ է արել ազգին. այժմ գոնէ նորա հարսնու անմեղ թոռներին պատուաւոր կերպով թաղել տւէք, որը այնքան մեծ ծախք չի պահանջել ձեզնից...»։

(Շարունակելի)

ՀԱՅ ՀՈՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԳԻՒԼԱԿ ԻՆ

Բաղաքիս քաղաքապետութիւնն իր վերջի ժողովին մէջ որոշեց թէ հասարակաց վայրերու, կառքերու, նաւերու, կեդրոններու, երկաթուղեաց և փողոցի մէջ հայհոյութիւն ընելն յանցանք է։ Ոստիկաններն հրահանգ պիտի ստանան այս օրէնքի դէմ մեղանշողներն ձերբակալել, որոնց պատիժն է 2է մինչև 10 տոլար տուգանք։

Թրքական ծծմբաբոյր Հայհոյութեանց վարժ մեր ազգայիններն ըզգոյշ ըլլալու են ասիկ վերջ։ Հայհոյելու ազատութիւն չ'կայ նիւ երթք քաղաքին մէջ ասիկ վերջ։

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ ՄԷՋ

ՈՍԻՒԿ ԿՈՒՒԻ

Բաղաքիս Բարժիթ Էնտ Ըփհօլըսթըրը հանդիսի Մարտ մէկ թուին մէջ Տիարք Կիւլպէնկեան և ընկ. ծանուցում մը կը հրատարակեն, որ կը գրուէ հանդիսին մէկ ամբողջ երեսը. ի մէջ այդք Կիւլպէնկեան տունն կ'ըսէ թէ «մենք արեւելեան խալիկ և կապերտի մեծագոյն վաճառականաց ցանկին մէջ առաջին տեղը կը բռնենք տակաւին, ինչպէս որ կը հաստատուի մաքսատան պաշտօնահամարով (ըսթաթիսթիթթ)»։

Նոյն հանդիսի Յուլիս 1ի թուին մէջ Տիար Թալչանճեան մի ուրիշ երես ծանուցում կը հրատարակէ, որով՝ ըստ սովորականին, իր տան առաւելութիւններն ու ապրանսաց տեսակը թուելէ զատ՝ կը պատասխանէ անուղղակի կերպով յիշեալ ծանուցման այսպէս. «Ապագային իմ ներածութիւններս ամենէ մեծն պիտի շարունակեն ըլլալ այս երկրի մէջ. բայց այս ճշմարտութիւնն կարելի չէ ապացուցանել մաքսատան պաշտօնահամարով (ըսթաթիսթիթթ), վասնզի կառավարութիւնն այդ տեսակ ըսթաթիսթիթթ մը չի պահեր բնաւ. այս ճշմարտութիւնն պաշտօնական հարցաքննութեամբ ճշգրտած եմ»։

Հարկ է ըսել թէ ինչ կը նշանակէ այս։ Եւ ինչ կ'ըսեն ամերիկացի գնողներն...։

ՄԻՈՒԹԻՒՆԻ ՈՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ

ԱՌԷՆՔ, 26 Յունիս

Մեծայարգ խմբագիր ՏիգրիՍ

ազգագուտ լրագրի։

Ծնդրեմք ձեր պատ. թերթի միջոցաւ հաճեցէք ծանուցանել «Միութիւն»ի եռամսեայ դադարումը։

Գ. տարեշրջանի Ա. թիւը (23) լոյս կը տեսնէ Սեպտեմբերի սկիզբը։ Ընդունեցէք Պատ. Տէր մեր խորին յարգանքները։

ՈՄԲ. «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի

ՆԱՄԱԿ ՅՈՒ ԲԻՎՈՐԵՆ

Յուլիս 24. Գաղաքիս Գրադարանի վարչութիւնը հրապարակային ժողով մ'ունեցաւ այսօր. այս ժողովները հոս լարանի ալ տեղ կը բռնեն: Ներկայներու թիւը թէ քիչ էր, բայց վարչութեան Ատենապետէն զատ՝ միւս անդամներուն բոլորին ալ բացակայութիւնը ներքի չէր. հանդիսականները վարչութեան վրայ պարտազանց պաշտօնէութեան մը գաղափարը առին:

Պ. Մ. Տօնապետեանի նիւթն էր «Գրադարանի պէտքը»:

Մէյրի Չօրտիւկեան վեց տարեկան սիրուն հայ աղջիկն զոց արտասանեց «Հայրենիքդ մ'ողջիր կ'ըսեն օտարները» երգը:

Երկրորդ խօսողն էր Տիկին Աննա Ֆաթոնեան, որուն նիւթն էր «Ինչպէս կանգնինք»:

Երրորդ խօսողն Տիկին Չօրտիւկեանն էր, նիւթ ունենալով «Դառնանք»: ամենուն ալ սիրտը Հայրենիքի սուրբ յիշատակներով լեցուեցաւ. իրեն յատուկ եղած զգայուն խօսքերն ու շեշտեր շատերու աչքերէն արցունք ալ խլեցին: Դժբաղդաբար Տիկինը այդ օր տկար ըլլալուն համար իր պատրաստածին ամբողջը չը կարգաց, այլ մէկ երկու մաս մ'իայն: Իրմէ ամբողջը խնդրեցի եւ ահա օրինակը ձեզ կը զրկեմ: Տիկինը իր այս շարժումն «Վերահաս աղէտը և մեր կոյրները» Հայրենիք գաղթելու քարոզ մ'էր. ահա՛ ձեզ կը զրկեմ հայ կնոջ մը քարոզն ալ, որ Ամերիկայ մեանի վաճառքը մեր ազգայիններուն ապտակ մ'է:

Չ. Պ. ՄԻՆՈՐԱՆ

ՏԻԳՐԻՍԻ ԳԻՒՓԷԼԵԱՆ

Մինակ Հայ Սափրիչն Ի Նիւ Եորք, 607 Յրդ Աֆիւ, 39ի և 40ի մէջ

Մազին ձեռ մարդու մը գլխաւոր զարդերէն մին է. օտար ազգի սափրիչի երթալով՝ ուզածը հասկըցունելու դժուարութիւն մի կրի, մենք պատրաստ ենք ձեր սիրած ձեւով կտրել ձեր մազը և մօրուքը, ինչպէս նաև կակուղիկ մը կ'ածիլենք երեսները:

Մեր գներ հասարակ են և գործը առաջնակարգ:

Նաև անկիներու ամենալաւը \$1.25 ի կարող ենք ծախել: Փորձեցէք և տեսէք:

Յուլիս 25.

ՈՒՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԻՍԻ

Մեզմէ հարցուած է թէ ինչո՞ւ շարունակ մեր ծանուցումը կը զընենք Տիգրիսի մէջ: Այս հարցման պատասխանելու համար երկու բառ մ'իայն բաւական է. —մեր շահուն համար: Տիգրիսի միջոցաւ ոչ միայն քաղաքէս, և ուրիշ կողմերէ շատ մը պատահական ու նոր յաճախորդներ ունեցած ենք, այլ և ուրիշ քաղաքներէն նիւ Եորք այցելող կամ Հայրենիք գնացող Հայրենակիցներ ուղղակի մեզ եկած են:

Մեր խորին շնորհակալութեամբ մնամք յարգանքօք

Ե. ԹԱԿԱՍՅԱՆ ԵՒ Պ. ԵԹԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՍԱՐԱՆ


Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց

Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա մատակարարութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միջոց կը գնահատուի հասարակութեան կողմէ:

Միանգամ փորձելն բաւական է մշտնջենական յաճախորդ ըլլալու:

ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՈՒՂՈՒՆԵԱՆ

Վաճառականք և Նորոգիչք Թիւ 159 Իսթ 27րդ Փողոց, Նիւ Եորք.



Պատիւ ունին ծանուցանել թէ այս խանութ հաստատած են վաճառելու համար ամեն տեսակ պատրաստ հագուստներ՝ խիստ աժան գրեններով: Կը կարեն ապրուած նոր հագուստներ. կը նորոգեն հիներ, կը ներկեն, կ'արթուցեն (իւթիւ ընել) և կ'ընեն ինչ որ կարևոր է գործածուած զգեստներէն ներքեւ երեւոյթ ապու:

Կը վաճառեն նաև ամեն տեսակ ձերմակեղէն ևն. ևն.:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցետուր, նամակագրութիւն, հրատարակչի, շրջաբերականներ, տետրակներ ևն.:

Մեր գները զոհարարուցի են. տըպագրութիւնն՝ մաքուր:

Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ Տիգրիսի մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող զանոնք հըրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար կարի եղած շարժում, էջք-թըրօթայի շինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ:

Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար զըրել Լրագրոյս Ուրագրութեան:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Գերորդ Տպագրութիւն

Մաքսուէլ Սըմըրվիլ

Հրատարակիչ


Կը բաղկանայ 25 մեծագիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ մ'իայն:

Սոցա գինն է,  
Կտակայ կազմ 62 տղ. 50 սէնթ  
Կէս կաշիակազմ 87 ,, 50  
Փառակազմ 100 ,,

Առաջին տեսակէն կը զրկուին անոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տղար 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տղար, իսկ վերջինին՝ 4 տղար:

Այս Համագիտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար զըրել Ուրագրութեան:


Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,  
Թիւ 628 Յրդ Աֆիւ, Նիւ Եորք:  
Կը ծանուցանէ թէ, իրեներկայացուցիչ Համաբաւար մի վաճառատան,



Կարող է ծախել ամեն տեսակ հեծելանիւններ խիստ աժան գներով: Գնել փափաքողք եթէ իրեն զիմեն գո՛ւ կը մնան միշտ:

Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ,  
40ՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ 40ՇԿԱԿԱՐ,  
Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք.

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աժան գներով: Մեր Հայրենակիցներէ փորձ մը մ'իայն կը խնդրենք:



Մեր կոշիկները կը կարենք ձեւաւորել և վաճառել կերպով:  
Կը նորոգենք հին կոշիկներ շափաւոր գներով:  
Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գո՛ւ պիտի մնաք:  
— 239 Իսթ 26րդ փողոց —

Հ Ի Ր Զ Օ Լ Ս  
ՄԱԶԻ ԴԵՂ



Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:

Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը գիտնալու համար, որ արևելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հատով:  
Կը ծախուի բոլոր զեղադրոններուն քով:  
Գին 50 Սէնթ մ'իայն:  
Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ ընկերութեանէ:  
Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, թիւ 45 Էքսչէնք ըսթրիթ, Ուսթըր, Մասս:



ՅԱԿՈԲ Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ  
(Ներկայացուցիչ)  
ՈՒՐԱԳՐՈՒՄ Պ. ԳԵՕՂԸՐ ԵՒ  
ԵՂԱՍՏՐՅ,  
ՎԱՃԱՌ ՈՒ ԿԱՆԻ  
Գինի, Օղի, Ոգելից Ըմպիրաց և  
Թիւ 202, 204 Իսթ 23րդ Փողոց  
Նիւ Եորք, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արդոյ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպիրներն ոչ միայն փորձեալ և անխորտակ են, այլ և զիւրամատչելի են ամէն գտակարգի անձանց:  
Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Գալիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուրաքի, օղի, գինի, շամբանիս, մասթիքայ, գարնջուր, պրանտի, ափսին և այլն, իրենց ամեն տեսակներով:  
Փափաքողաց գներու ցուցակը՝ զրկուի առանց ո՛ր և է ծախքի:  
Ծանոնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշդութեամբ և փութով: Բացառելով մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածն առն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպիրներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլ անտրիթէյլ)

Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպիրներուն, յանձն կառնենք զայն փոխել, եթէ պակասած ու վնասուած չըլլան:  
Ըմպիրներ կը վաճառուին շիշով, կալընով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:

Գինել յիւեալ հասցէին կամ  
Յ. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ,  
535 ՈՒՆԻՍԻՒ 57րդ Փողոց, Ն. Ե.

ԿՈՒՂՈՒԻ

Կուղուի Հայ կին մը կամ օրիորդ մը, Ուսթըր համեստ հայ ընտանիքի մը մէջ, որուն գործը պիտի լինի երկու մասկանց հոգ տանել և տնային թեթիւ գործեր ընել: Առաջին անգամ շարժարական \$25 տոլար պիտի վճարուի՝ ուսելիքէ և նընջելու սենեակէ զատ, իսկ երբ գոհացուցիչ ըլլայ իր գործերն՝ կ'աւելցունենք վարձը:  
Գինել 2. Թ. ՏԻԳՐԻՍԻ միջոցաւ:

EGYPTIAN KING CIGARETTES.



Տեղացիները իրենց փափակեալ քանակութեամբ կը կարենք ձեւաւորել և վաճառել կերպով:  
Կը նորոգենք հին կոշիկներ շափաւոր գներով:  
Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գո՛ւ պիտի մնաք:  
— 239 Իսթ 26րդ փողոց —

Հատ անգամ իրր տաճկական ծխախոտ կը վաճառուի ժողովրդեան: Մենք մասնագէտ ըլլալով այս ճիւղի մէջ, և յեզիպտոս ներկայացուցիչներ ունենալով լաւ ծխախոտ բերել կուտանք մեր սիկարէթներուն համար, որք զուտ եզիպտական ծխախոտէ շինուած են: Միանգամ փորձելն բաւական է մնայուն յաճախորդ ըլլալու համար: Կը վաճառուի ամէն տեղ: Կեդրոնատեղին է 52 Թրինթի Փլէյս, Պաթըրի Փառքին մօտ:  
— Մի՛ մոռանաք անունը. էճիփըն Գինի Սիկարէթս: —